ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/16-28-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	RWD	R821/FR-21 TriColor Multichannel Fiber Photometry System	RWD Life Science Inc.	Եռագույն բազմալիքային օպտիկամանրաթելային ֆոտոմետրիայի համակարգ. Կենդանիների ուղեղում ֆլյուորեսցենտային ազդանշանների գրանցման համար նախատեսված եռագույն բազմալիքային օպտիկամանրաթելային ֆոտոմետրիայի հիմնական համակարգ երեք անկախ գրգռման լուսային ալիքով՝ 410 նմ (ռեֆերենս / իզոսբեստիկ ալիք), 470 նմ (կանաչ ֆլյուորեսցենցիայի գրգռում) և 560 նմ (կարմիր ֆլյուորեսցենցիայի գրգռում)։ Յուրաքանչյուր ալիքի գրգռման հզորությունը՝ կարգավորելի 0-ից 100 մկՎտ միջակայքում, կարգավորման քայլը՝ 0.1 մկՎտ։ Ուղեղային շրջանների միաժամանակյա գրանցման ալիքների քանակը՝ 7։ Գրանցման առավելագույն հաճախականությունը 250 կադր/վրկ, գրանցումն իրականացվում է գերզգայուն CMOS տեխնոլոգիայով

					աշխատող տեսախցիկով՝ երկդետեկտորային, ժամանակային բաժանմամբ մուլտիպլեքսավորման (TDM)։ Թվային մուտք/ելքերի քանակը՝ 4 մուտք և 4 ելք՝ արտաքին սարքավորումների հետ համաժամացման և կառավարման համար։ Ելքային ազդանշանի հաճախականությունը՝ կարգավորելի 0–500 Հց միջակայքում՝ իմպուլսի տևողության և լայնության կարգավորման հնարավորությամբ։ Համակարգը համատեղելի է օպտոգենետիկայի հետ։ Հիմնական սարքի բաղկացուցիչներն են՝ - Սնուցման մալուխ, 2 BNC մալուխ, 2 USB 3.0 մալուխ, 1 USB հանգույց (USB hub), ծրագրային ապահովմամբ USB կրիչ. - Հասուն առնետների ֆոտոմետրիայի համար՝ ցածր ինքնաֆլյուորեսցենցիայով օպտիկամանրաթել պարունակող միացնող մալուխ (patch cord)՝ 1 հատ. օպտիկամանրաթելի միջուկի տրամագիծը՝ 200 մկմ, արտաքին օպտիկական տրամագիծը՝ 220 մկմ, պաշտպանիչ ծածկույթը՝ 900 մկմ, թվային ապերտուրան՝ առնվազն 0.37, երկարությունը՝ 2 մ։ Համակարգի կողմում՝ FC տիպի միակցիչ, կենդանու կողմում՝ մալուխը ավարտվում է Ø2.5 մմ կերամիկական (ցիրկոնիումի երկօքսիդ) ֆերուլով։ - Ø2.5 մմ կերամիկական միացնող թևք։ - Կենդանու վարքային ակտիվության տեսագրման համար նախատեսված տեսախցիկ՝ օպտիկամանրաթելային ֆոտոմետրիայի համակարգի հետ աշխատանքի համար։ Լուծաչափը ոչ պակաս, քան 1920×1080 կետ, 30-150 կադր/վրկ հաճախականությամբ։ Տեսագրությունը պետք է համաժամացվի ֆոտոմետրիայի տվյալների հետ։ Պետք

					է ներառի տեսախցիկի միացման մալուխը: - Կենդանու վարքային տեսանկարահանման համար նախատեսված տեսախցիկի ամրակ, բարձրությունը՝ 0.8-1.5 մ, պտտման անկյունը՝ 360°: Պետք է լինի համատեղելի վարքային տեսախցիկի հետ: - Համակարգիչ. ֆոտոմետրիայի համակարգի կառավարման, տվյալների գրանցման և պահպանման համար նախատեսված՝ նախապես տեղադրված և լիցենզավորված ծրագրային ապահովմամբ. պրոցեսորը՝ Intel Core i7 14-րդ սերնդի 12 միջուկ և 16 հոսք, դիսկրետ վիդեոքարտ՝ NVIDIA GeForce RTX 5050 4 ԳԲ սեփական վիդեոհիշողությամբ, օպերատիվ հիշողությունը՝ 16 ԳԲ DDR5՝ ընդլայնման հնարավորությամբ, կուտակիչը՝ 1 ՏԲ NVMe SSD՝ մեկ ազատ M.2 միակցիչով, էկրանը՝ 16 դյույմ անկյունագծով, լուծաչափը՝ 1920×1080 կետ, միակցիչները՝ 3 USB 3.2 (որոնցից մեկը՝ 10 Գբիթ/վրկ թողունակությամբ), 1 լիարժեք ֆունկցիոնալությամբ USB Type-C՝ DisplayPort 1.4 տեսաազդանշանի ելքի, USB Power Delivery (PD)՝ մինչև 100 Վտ սնուցման և տվյալների փոխանցման աջակցությամբ, HDMI 2.1, RJ45 (Ethernet) միակցիչ և ականջակալի/խոսափողի համակցված բնիկ, անլար կապը՝ Wi-Fi և Bluetooth, օպերացիոն համակարգը՝ Windows 11 Pro (64-բիթ), սնուցման ադապտերը՝ համակարգչի հզորությանը համապատասխան՝ ներառված կոմպլեկտում: Համակարգիչը ապահովում է ֆոտոմետրիայի համակարգի և վարքային տեսախցիկի միաժամանակյա աշխատանքը՝ առավելագույն գրանցման հաճախականության և ալիքների քանակի

				պայմաններում՝ առանց կադրերի կորստի։ - Ծրագրային ապահովում. ֆոտոմետրիայի համակարգը մատակարարվում է արտադրողի կողմից մշակված մասնագիտացված ծրագրային ապահովմամբ, որը միևնույն միջերեսում ապահովում է ֆլյուորեսցենտային ազդանշանի գրանցումը, վարքային տեսագրումը և տվյալների վերլուծությունը։ Ինտերֆեյսի լեզուն՝ անգլերեն։ Գրգռման լույսի հզորությունը կարգավորվում է անմիջապես ծրագրային ինտերֆեյսից՝ 0-ից 100 մկՎտ միջակայքում, 0–100% սանդղակի ցուցադրմամբ և 0.1 մկՎտ կարգավորման ճշգրտությամբ։ Ծրագրային ապահովումը պարունակիում է 6 նախապես սահմանված գրգռման ռեժիմ՝ տարբեր փորձարարական խնդիրների համար։ Օպտիկամանրաթելերի ծայրային մակերևույթների պատկերման թիրախային տիրույթները (ROI) կարգավորվում են ինչպես սարքի արտաքին կարգավորիչով, այնպես էլ ծրագրային եղանակով։ Գրանցման ռեժիմները սահմանվում են ծրագրային եղանակով՝ գրանցման տևողության և այլ պարամետրերի կարգավորմամբ, ներառյալ՝ անընդհատ և ընդմիջումներով գրանցման ռեժիմները։ Ծրագրային ապահովումը ապահովում է իրադարձությունների նշագրման երեք եղանակ՝ արտաքին ազդանշանով, ձեռքով և վարքային ROI-ով։ Վարքային տեսագրումը և ֆլյուորեսցենտային տվյալների գրանցումը կարգավորվում են միևնույն ծրագրային ինտերֆեյսից և իրականացվում են միաժամանակ։ Ապահովվում է մեկից ավելի վարքային տեսախցիկների միաժամանակյա աշխատանք։ Գրանցման ընթացքում ծրագրային

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/16-28-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1				

ապահովումը ապահովում է TTL ազդանշանի ելք արտաքին սարքերի գործարկման համար՝ ֆլյուորեսցենտային ազդանշանի՝ սահմանված ΔF/F շեմը գերազանցելու կամ կենդանու՝ որոշակի ROI մուտք գործելու դեպքում: Ելքային TTL ազդանշանի հաճախականությունը 0–500 Հց միջակայքում, իմպուլսի լայնությունը, հետաձգումը և տևողությունը պետք է լինեն կարգավորելի՝ ելքային ազդանշանի ուղղակի ստուգման հնարավորությամբ: Համակարգը նախատեսում է նաև՝ • Ղեկավարվող սպեկտրների ֆոտոմետրիայի համար՝ ցածր հզորությամբ ֆլյուորեսցենցիայով օպտիկամանրաթել պարունակող միացնող մալուխ (patch cord)՝ 1 հատ: Օպտիկամանրաթելի միջուկի տրամագիծը՝ 200 մկմ, արտաքին օպտիկական տրամագիծը՝ 220 մկմ, պաշտպանիչ ծածկույթը՝ 900 մկմ, թվային ապերտուրան՝ 0.37, երկարությունը՝ 2 մ: Համակարգի կողմում՝ FC տիպի միակցիչ, կենդանու կողմում՝ մալուխը ավարտվում է Ø1.25 մմ կերամիկական ֆերուլով: • Ø1.25 մմ կերամիկական միացնող թևք: • Օպտիկական հզորության չափման և օպտիկամանրաթելային ֆոտոմետրիայի համակարգի լուսային ելքի վերահսկման համար նախատեսված չափիչ սարք: Հզորության չափման միջակայքը՝ 0–40 մՎտ, լուծաչափը՝ 0.01 մկՎտ: • Ազատ շարժվող կենդանիների փորձերի համար նախատեսված 1×1 օպտիկամանրաթելային պտտական միակցիչ (Fiber Optic Rotary Joint): Ապահովում է օպտիկական ազդանշանի փոխանցումը կենդանու շարժման և պտույտների ընթացքում՝ նվազեցնելով

					օպտիկամանրաթելային մալուխի ոլորումը: Միացումները՝ FC/FC տիպի: • Միաժամանակ բազմակի ուղեղային շրջաններից կամ բազմակի օպտիկամանրաթելային կանյուլաներից ազդանշանների գրանցման համար նախատեսված 1-ից 4 ճյուղավորվող, ցածր ինքնաֆլյուորեսցենցիայով օպտիկամանրաթելային միացնող մալուխ (patch cord): Ունի 4 ելքային օպտիկամանրաթել, յուրաքանչյուրի միջուկի տրամագիծը՝ 200 մկմ, արտաքին օպտիկական տրամագիծը՝ 220 մկմ, պաշտպանիչ ծածկույթը՝ 900 մկմ, թվային ապերտուրան՝ 0.37, երկարությունը՝ 2 մ: Ելքային կողմերից յուրաքանչյուրը ավարտվում է Ø1.25 մմ կերամիկական ֆերուլով: • Միաժամանակ բազմակի ուղեղային շրջաններից կամ բազմակի օպտիկամանրաթելային կանյուլաներից ազդանշանների գրանցման համար նախատեսված 1-ից 4 ճյուղավորվող, ցածր ինքնաֆլյուորեսցենցիայով օպտիկամանրաթելային միացնող մալուխ (patch cord): Ունի 4 ելքային օպտիկամանրաթել, յուրաքանչյուրի միջուկի տրամագիծը՝ 200 մկմ, արտաքին օպտիկական տրամագիծը՝ 220 մկմ, պաշտպանիչ ծածկույթը՝ 900 մկմ, թվային ապերտուրան՝ 0.37, երկարությունը՝ 2 մ: Ելքային կողմերից յուրաքանչյուրը ավարտվում է Ø2.5 մմ կերամիկական ֆերուլով: • Ստերեոտաքսիկ սարքի հետ համատեղ օգտագործման համար նախատեսված բռնակ՝ Ø2.5 մմ կերամիկական ֆերուլով օպտիկամանրաթելային կանյուլաների իմպլանտացիայի ժամանակ ճշգրիտ ամրացման և դիրքավորման համար: Կարողանում է ամրացնել Ø2.5 մմ կերամիկական

					կանյուլաներ կամ համապատասխան կերամիկական միացնող թևքեր (ceramic sleeves)։ • Ստերեոտաքսիկ սարքի հետ համատեղ օգտագործման համար նախատեսված բռնակ՝ Ø1.25 մմ կերամիկական ֆերուլով օպտիկամանրաթելային կանյուլաների իմպլանտացիայի ժամանակ ճշգրիտ ամրացման և դիրքավորման համար։ Կարողանում է ամրացնել Ø1.25 մմ կերամիկական կանյուլաներ կամ համապատասխան կերամիկական միացնող թևքեր (ceramic sleeves)։ • Սև օպտիկամանրաթելային կանյուլաներ՝ Ø2.5 մմ կերամիկական ֆերուլով, 200 մկմ միջուկով և 0.39 թվային ապերտուրայով, 20 հատ։ • Սև օպտիկամանրաթելային կանյուլաներ՝ Ø1.25 մմ կերամիկական ֆերուլով, 200 մկմ միջուկով և 0.39 թվային ապերտուրայով, 20 հատ։ • Կերամիկական (ցիրկոնիումի երկօքսիդ) ճեղքված միացնող թևքեր (split ceramic sleeves), 20 հատ՝ Ø1.25 մմ կերամիկական ֆերուլների միացման համար։ Ներքին տրամագիծը համապատասխանում է Ø1.25 մմ ֆերուլին և ապահովում է երկու ֆերուլների համառանցք, կայուն և կրկնվող միացում։ • Կերամիկական (ցիրկոնիումի երկօքսիդ) ճեղքված միացնող թևքեր (split ceramic sleeves), 20 հատ՝ Ø2.5 մմ կերամիկական ֆերուլների միացման համար։ Ներքին տրամագիծը համապատասխանում է Ø2.5 մմ ֆերուլին և ապահովում է երկու ֆերուլների համառանցք, կայուն և կրկնվող միացում։ Երաշխիքային ժամկետը՝ մատակարարման պահից՝ 12 ամիս։ Առաջարկի արժեքում ներառված են համակարգի կարգաբերման

				աշխատանքները, անձնակազմի՝ համակարգի օգտագործման կանոններին ծանոթացնելը: